



ՀՅԴ Բյուրոյի Հայ Դատի Կենտրոնական Գրասենյակ
Armenian National Committee – International

<https://ancnews.info>

haydat@arf.am

+374(0)96 76-86-86

Ամփոփագիր

ՀՅԴ Հայ դատի գրասենյակների և հանձնախմբերի կողմից կատարված հիմնական աշխատանքների

Ապրիլի 5-17, 2021 թ.

ՀՅԴ Բյուրոյի Հայ Դատի Կենտրոնական գրասենյակը պարբերաբար հրապարակում է Հայ Դատի հանձնախմբերի ու գրասենյակների գործունեության ամփոփագրեր, որոնք լրատվամիջոցներին, հասարակական լայն շրջանակներին, մասնագիտական ու քաղաքական հանրություններին հնարավորություն են տալիս կենտրոնացված և հավաստի տեղեկատվություն ստանալ ՀՅԴ Հայ Դատի համաշխարհային ցանցի գործունեության վերաբերյալ, իրազեկ լինել սփյուռքի քաղաքական գործունեության ընթացիկ արդյունքներին և առաջադրված խնդիրներին:

Նախորդ ամփոփագրերին կարող եք ծանոթանալ հետևյալ հղումով
[https://www.arfd.am/?s=%D5%A1%D5%B4%D6%83%D5%B8%D6%83%D5%A1%D5%A3%D5%AB%D6%80&post_type\[0\]=news&post_type\[1\]=events](https://www.arfd.am/?s=%D5%A1%D5%B4%D6%83%D5%B8%D6%83%D5%A1%D5%A3%D5%AB%D6%80&post_type[0]=news&post_type[1]=events)

Կանադա

Վերջին շրջանում ՀՅԴ Հայ դատի Կանադայի հանձնախմբի թիվ մեկ քաղաքական առաջնահերթությունը վերաբերում էր թուրքական «Բայրակթար» անօդաչուններում օգտագործվող կանադական տեխնոլոգիաների դեպի Թուրքիա արտահանման նկատմամբ արգելք սահմանելուն: Կատարված աշխատանքները նախորդ շաբաթ պսակվեցին հաջողությամբ, երբ կանադական կառավարությունում կասեցրեց կանադական ռազմական արտադրանքի և տեխնոլոգիաների արտահանումը Թուրքիա:

Կանադայում ավարտվել է, Ադրբեջանի կողմից կանադական տեխնոլոգիաների օգտագործման հետաքննությունը, որով փաստվել է Թուրքիայի կողմից կանադական տեխնոլոգիաների կիրառումը ղարաբաղյան պատերազմի ընթացքում: Ըստ այդմ, ապրիլի 12-ին Կանադայի արտգործնախարար Մարկ Գարնոն հայտարարություն է տարածել՝ կանադական ռազմական արտադրանքի և տեխնոլոգիաների արտահանումը Թուրքիա կասեցնելու վերաբերյալ: Մասնավորապես, խոսքը գնում է «Բայրակթար» անօդաչունների

տեղորոշման և տեսանկարահանման կանադական Wescam համակարգերի մասին, որոնք առանցքային նշանակություն ունեն անօդաչու սարքի համար:

ՀՅԴ Հայ դատի Կանադայի հանձնախումբը շարունակելու է ջանքերը՝ հասնելու Թուրքիայի նկատմամբ Կանադայի կողմից ռազմական նշանակության ցանկացած արտադրանքի վաճառքի արգելքին:

Ամերիկայի Միացյալ Նահանգներ

Հայ դատի Ամերիկայի հանձնախմբի գործողությունների շնորհիվ՝ ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի հայկական հանձնախումբը նախաձեռնել է երկկուսակցական ստորագրահավաք, որով ԱՄՆ նախագահ Բայդենին կոչ է արվում ապրիլի 24-ի ուղերձում ճանաչել Հայոց ցեղասպանությունը: Ստորագրահավաքը նախաձեռնել են հայտնի կոնգրեսականներ և մեր ժողովրդի մեծ բարեկամներ Ադամ Շիֆը, Գուս Բիլիրակիսը, Ֆրենք Փալոնը, Դեյվիդ Վալադաոն, Ջեքի Սփեյերը: Հատկանշական է, որ նախորդ ամիս նույն պահանջով երկկուսակցական ստորագրավաք է նախաձեռնվել նաև ԱՄՆ Սենատում, առանցքային՝ արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Ռոբերտ Մենենդեզի նախաձեռնությամբ, որին միացել էին թվով 38 սենատորներ:

Վերջին շաբաթների ընթացքում Հայ դատի հանձնախմբի և գործակից կազմակերպությունների համալիր ջանքերի արդյունքում, առավել քան մեկ միլիոն նամակ է ուղղվել Սպիտակ տան վարչակազմին՝ քաջալերելու նախագահ Բայդենին ճանաչել Հայոց ցեղասպանությունը:

Ապրիլի 15-ին, Արցախի նկատմամբ ադրբեջանաթուրքական ագրեսիային և գերիներին վերաբերող հարցերը քննարկվել են ԱՄՆ Սենատում, պետքարտուղարի քաղաքական հարցերով տեղակալի պաշտոնում Վիկտորիա Նուլանդի թեկնածության քննարկման ժամանակ: Ռոբերտ Մենենդեզը բարձրացրել է հայ ռազմագերիների ազատ արձակումը ապահովելու, Արցախին և Հայաստանին մարդասիրական օգնություն տրամադրելու և ԵԱՀԿ Մինսկի խմբի ձևաչափում բանակցային գործընթացը վերականգնելու հրատապության մասին: Նույն քննարկման ընթացքում, Թուրքիայի ապակայունացնող գործունեության վերաբերյալ հարց է բարձրացրել սենատոր Վան Հոլենը:

Եվրոպա

Եվրոպական խորհրդարանի պատգամավոր Լուկաս Ֆուրլասի (Կիպրոս, ԵԺԿ) նախաձեռնությամբ ապրիլի 12-ին տեղի ունեցավ առցանց համաժողով՝ Ադրբեջանում հայ ռազմագերիների և այլ պահվող անձանց վերաբերյալ: Քննարկվեցին խնդրի իրավական և քաղաքական ասպեկտները: Համաժողովի բանախոսներն էին ՀՅԴ Եվրոպայի Հայ դատի գրասենյակի գործադիր տնօրեն Հեղինե Էվինյանը, Եվրոպական խորհրդարանում Հարավային Կովկասի հետ հարաբերությունների հարցերով պատվիրակության ղեկավար, պատգամավոր Մարինա Կալյուրանդը և ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանը:

Իր խոսքում Եվրոպայի Հայ դատի գրասենյակի գործադիր տնօրեն Հեղինե Էվինյանը շեշտեց, որ պատերազմի ավարտից ամիսներ անց հայ ռազմագերիներին անազատության մեջ պահելը Ադրբեջանի կողմից պատերազմը հոգեբանական տեսանկյունից երկարացնելուն ուղղված քայլ է: «Սա պատերազմի կործանարար հետևանքների շարունակությունն է: Մարդ արարածին, անգամ եթե նա անազատության մեջ է, չի կարելի օգտագործել որպես քաղաքական առևտրի առարկա՝ նորանոր օգուտներ կորզելու համար: Եվրոպայում կառավարությունների լռությունն ու պասիվ դիրքորոշումն այնպիսի մարդասիրական խնդրի վերաբերյալ, ինչպիսին ռազմագերիների ազատ արձակման հարցն է, հուսահատեցնող է Եվրոպայի սիյուռքահայության համար և, ըստ էության, յուրաքանչյուրի համար, ով մտահոգված է այս խնդրով և ընդհանրապես կարևորում է մարդկային արժանապատվությունը»:

Ավելի վաղ, ապրիլի 7-ին ադրբեջանաթուրքական ագրեսիայով պայմանավորված ներկա իրավիճակին է անդրադարձել Եվրոպական Խորհրդարանի անվտանգության և պաշտպանության ենթահանձնաժողովի նախագահ, պատգամավոր Նաթալի Լոիզոն՝ ընդգծելով ղարաբաղյան հակամարտության հավասարակշռված կարգավորման և գործուն քայլերով Արցախի մշակութային ժառանգության պահպանման հրատապ կարևորությունը:

Ավստրալիա

Հայոց ցեղասպանության 106-րդ տարեիցին ընդառաջ՝ Հայ դատի Ավստրալիայի հանձնախումբը, տեղի հայկական համայնքի անունից, բաց նամակ է հղել վարչապետ Սկոտ Մորիսոնին՝ կոչ անելով ճանաչել Օսմանյան կայսրությունում հայերի, ինչպես նաև ասորիների ու հույների դեմ իրականացված ցեղասպանությունը:

Հանձնախումբը հորդորել է վարչապետին՝ հավատարիմ մնալ դեռևս 2011 թվականին խորհրդարանում ունեցած ելույթին, որում նա մասնավորապես հայտարարել էր. «Հայոց ցեղասպանությունը մարդկության դեմ իրականացված ամենասարսափելի հանցագործություններից է: Կարևոր է, որ մենք ճանաչենք Հայոց ցեղասպանությունն այնպես, ինչպես որ է»:

Ի տարբերություն խորհրդարանական տարիների գործունեությանը՝ արդեն վարչապետ Մորիսոնը, որը պաշտոնը զբաղեցնում է 2018 թվականից, հրաժարվել է կիրառել «ցեղասպանություն» եզրույթը՝ տեղի տալով արտաքին ճնշումներին:

Կիպրոս

Ապրիլի 9-ին, կիպրական Ստրովոլոս քաղաքում բացվել է Արցախյան պատերազմում զոհված ազատամարտիկների հիշատակին նվիրված պուրակ: Նախաձեռնության հեղինակներն են «Համերաշխության շարժում» կուսակցության առաջնորդ, Եվրախորհրդարանի նախկին պատգամավոր, Արցախի մեծ բարեկամ Էլենի Թեոխարիուսը և Ստրովոլոսի քաղաքապետ Անդրեաս Պապախարալամպուսը:

Հայ Դատի հանձնախմբերն ու գրասենյակները շարունակում են ամբողջ աշխարհում իրականացնել հայության շահերի պաշտպանության աշխատանքներ՝ օգտագործելով լրբբիստական գործունեության համալիր գործիքակազմեր: Արցախի նկատմամբ ադրբեջանաթուրքական ագրեսիան դատապարտելու, Արցախի տարածքային ամբողջականության վերականգնմանը նպաստելու, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության ձևաչափը վերականգնելու, գերիների և զոհվածների մարմինների փոխանակման խնդիրը բարձրացնելու, արտասահմանյան լրատվամիջոցներին օբյեկտիվ տեղեկատվությամբ ապահովելու ուղղությամբ կատարվում են մեծ ծավալի աշխատանքներ: Հատուկ ուշադրություն է դարձվում Ղարաբաղյան հմնախնդրի շուրջ տարբեր երկրներում ներքաղաքական քննարկումներ, խորհրդարանական լսումներ իրականացնելու վրա, որոնք հաճախ վերաճում են կոնկրետ բանաձևերի ընդունման:

ՀՅԴ Բյուրոյի Հայ Դատի կենտրոնական գրասենյակ

17.04.2021 թ.